

ընկնող աստղերի մասին աշակերտներին տուած թիւը բացատրութիւնը, երեւի ձեւմարան գիտելեաց» գրքից օգուտ քաղելով: ԺԳ. երեք ամիս շարունակ միայն կիրոսի պատմութիւն ուսուցանելը: ԺԵ. առհասարակ մանկավարժական խորհուրդների մէջ իւր կարծիքը միշտ լամառութեամբ պահպանելը և ուսուցիչների կարծիքը բացէ ի բաց մերժելը: ԺԶ. աշակերտներին դէպի ուսուցիչները գրգռելը և

ալլն և ալլն»: Եւ նոյն ալի մարդը 10 տարի տեսչութիւն արեց Երևանի Գպրանդոցում, որպէս վկայում է ներկայ գիրքը:

Գիրքը կազմած է խնամքով, բովանդակում է հարուստ նիւթեր, որոնք դասաւորւած են խելացի խմբադրութեամբ: Բայց թէ արդեօք որքան լիակատար է՝ անձեռնհաս ենք դատելու:

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՅ ՏԻԳՐԱՆ—«ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԷՔԻԱԹՆԵՐ», Ձորորդ գիրք: Թիֆլիս, 1888. տպ. Վարդանեանի, 8-ճալ, տառ № 12, գինն է 50 կ.: Նոյնը՝ Հինգերորդ գիրք, 1889 թ., 80 երես և յաւելւած «Արարտեան բարբառ» (բառարան) երես 80—143: 1889 թ. գինն է 50 կոպ.:

Այն ժամանակներից, երբ գերմանացի Եսկովը Գրիմը, հայրենական լեզուի, գրականութեան և հնագիտութեան գիտնականօրէն ուսումնասիրելու ուղղութեան հիմնադիրը, իւր եղբայր Վիլհելմի հետ հրատարակեց «Մանկական և տնային հէքիաթները» (Kinder-und-Hausmaerchen), երեք հատոր, 1812 թականին, «Գերմանական գրուցներ» (Deutsche Sagen), երկու հատոր, 1816-ից մինչ 1818 թ. «Իրլանդացի կախարդական հէքիաթներ» (Irish Elfenmaerchen), 1826 թ., — ժողովրդական աւանդութիւնների, հէքիաթների, առածների և ալլն ժողովելը՝ նաև միւս երկրներում դարձաւ և՛ կարեւոր և՛ պատուար գրական գործ: Այդ հէքիաթները և աւանդութիւնները, զրած ալլնպէս, ինչպէս ժողովուրդը պատմում է, մեծ նիւթ է

տալիս գիտնականներին, որոնք ուսումնասիրում են մի ազգի լեզուն, նրա բանաստեղծական ոգին, ժողովրդական հաւատալիքները և ալլն և ալլն: Հէքիաթների հետ կապւած է նաև մանկական գրականութեան մի ճիւղը, որը ժողովրդական հէքիաթներից նիւթ է քաղում՝ անընականի մէջ ևս զարճութիւն գտնող մանկական վառ երևակայութիւնը զբաղեցնելու համար:

Մեզանում գրականութեան ալլ ճիւղը նոր է սկսում զարգանալ. բայց որ ուրախալին է, ալլ գործի մէջ արդէն մտել է գիտակցութիւն: Ժողովել հէքիաթները և աւանդութիւնները բոլորովին ալլնպէս, ինչպէս նոքա ժողովրդի բերանով պատմում են, կարող է միայն նոցա գիտական և կրթական նշանակութեան գիտակից

մարդը: Այդ գործին ձեռնամուկն լինողից պահանջուով է ամենից առաջ բարեխղճութիւն: Նորանից չէ պահանջուով, որ առաջ բերած հէքիաթները լինին անպատճառ լաւ, անպատճառ հետաքրքրական, անպատճառ գեղարեւտօրէն պատմած,—ոչ. ալդ տեսակ գրւածները ժողովողի հեղինակութիւնը չեն, ուրեմն և նա պատասխանատու չը պիտի լինի նոցա ներքին արժէքի համար: Բայց նա, ալդ ժողովողը, պէտք է անպատճառ պատասխանատու լինի իւր հրատարակած հէքիաթների և աւանդութիւնների ճշգրտութեան համար: Այդ ձեռով հաւաքած հէքիաթները նշանակած չեն երեխաների ձեռքը տալու համար, այլ նոքա նշանակած են բանասէրների և ընդհանուր գրականութեան համար: Թող, ով ինչպէս կարող է, նոցանից օգտուի—լեզուագէտը՝ ժողովրդական ոճերից, բառերի ձևերից, պատմաբանը՝ ալդ պատմութիւնների մէջ արտապատու ժողովրդական ոգուց և պատմական եղելութիւնների հետքերից, բանաստեղծը՝ պատմած աւանդութիւնների մէջ արտապատու բանաստեղծական և հոգեբանական գրութիւններից, և այլն և այլն:

Այս ալսպէս լինելով, հասկանալի է, թէ ինչո՞ւ պ. Տիգրան Նաւասարդեանցի հէքիաթների ժողովածուի առիթով, մենք ալստեղ, գրախօսական բաժնում, ոչ այնքան պիտի կանգ առնենք նորա ժողոված հէքիաթների ներքին արժանաւորութեան վերաջ, որի համար ժողովողը չէ պատասխանատու, այլ ինքը ժողովուրդը, որքան ժողովողի անձնաւորութեան վերաջ: Մեզ հարկաւոր է իմանալ, թէ

ինչ գրաւակա՞ն է ներկայացնում պ. ժողովողը իւր պատմածների ճշգրութեան համար, որ չափով նա կարող է հեղինակութիւն, աւտօրիտետ համարել, իբրեւ կենդանի ձայն ժողովրդի: Այդ հարցին մենք մի որոշ չափով պատասխանած կը լինենք, եթէ առաջ բերենք պ. Նաւասարդեանցի հէքիաթների ժողովելու ձևը, եղանակը, վերջապէս պատմութիւնը այնպէս, ինչպէս մենք ալդ անձնական ծանօթութիւնից իմացած ենք:

Պ. հաւաքողը բնիկ Վաղարշապատցի է. իւր ուսումը ստացել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում: Նա հէքիաթների փոսկից ընկել է 1876 թ. դեռ ևս իբրեւ աշակերտ փշած դպրոցի: Նա ալդ անձն էր, օգտուելով ամրան արձակուրդներին, գնալով Էջմիածնի, Սրբանի, Նոր-Բալադէղի, Գանձակի և Շուշայ գաւառները: Ժողովում էր՝ գիւղերում անուանի հէքիաթ-ասողների՝ պատմել տալով և նոյն հէքիաթը մի քանի մարդկանց բերանից լսելով: Պ. Նաւասարդեանցը սկսել է աւելի պարապել ալդ գործով, երբ նա 1879 թականին դուրս եկաւ Ներսիսեան դպրոցից, որից քնտ, 1880—82 թականներին, ուսուցչութիւն արաւ իւր հայրենի Վաղարշապատում: Այդ հանգամանքից օգտուելով, նա ստաւադրել է իւր ժողովածուն, որ և սկսել է պարբերաբար հրատարակել: Առաջին գիրքը լոյս է տեսել Վաղարշապատում 1881 թւին: Նոյն տարում հրատարակեց նա երկրորդ գիրքը Սրբաւանում և երրորդ գիրքը—Թիֆլիսում: Դոքա բոլորը կրում են մի վերնագիր, որ և ալս տողերի ճակատին քիչ ւած է: Բայց, բացի հրատարակու-

թիւնները արդէ շարքից, 1882 թւականին պ. Նաւասարդեանցը լոյս ընծայեց իւր ժողոված «Հալ-ժողովրդական Աւանդութիւններ» անունով գիրքը, որը բովանդակում է իւր մէջ՝ առածներ, երդեր, օրհնութիւններ, հանելուկներ, երգումներ և այլն:

1884 թ. պ. Նաւասարդեանցը գնում է արտասահման՝ օժանդակութեամբ պ. գնդապետ Մելիք-Հափկադեանցի և Կովկասի ու Բաքուի Բաքոյի զորքի Բնակչութիւնները: Այնտեղ նա լսում է գրականութեան մասին դատախոսութիւններ, և մասնաւորապէս հետամուտ է լինում իւր ընտրած ճիւղին վերաբերեալ գրականութեան: 1887 թւին նա վերադառնում է Թիֆլիս, ապա Վաղարշապատ, որտեղ շարունակում է իւր սկսած ձեռնարկութիւնը:

Գլխաւորապէս միջոցների սղութեան պատճառով, բոլոր վեց գրքերից հրատարակած են 300, 400 և միայն հինգերորդը՝ 600 օրինակով. բոլորն էլ հասարակ թղթի վրայ. առաջին չորս գրքերի գինն է 30 կոպէկ, վերջին երկուսինը՝ 50 կոպէկ: Միմիայն որպէս մի հանգամանք, աւելացնենք որ 4-րդ գիրքը տպարանում շարել է ինքը հրատարակիչ-հաւաքողը:

Բոլորը, ինչ հրատարակած է Արարտեան բարձրում, ինքը հրատարակիչն է հաւաքել ժողովրդի բերա-

նից անմիջապէս. իսկ ներկայ V գրքում հրատարակած են նաև Խրիմու և Լօռու բարբառներով հէքիաթներ, թւով 8 կտոր, որոնց հաւաքողները պ. Հմակալ Մաթինեանցն է՝ բնիկ Լօռացի և Գրիգոր քահանայ Մատինեանցը՝ Թիֆլիսեցի, բայց երկար տարիներ Խրիմում ուսուցչութիւն արած, որոնք և ներկայումս Թիֆլիս գտնւելով իրենք են տեսած այդ հէքիաթների սրբագրութիւնը տպագրութեան ժամանակ՝ տեղական բարբառի հարադատութիւնը պահպանելու համար:

Հաւաքողը նուազ ևս ունի Ղարաբաղի, Գանձակի և Վանի բարբառներով ձեռագիր աւանդութիւններ, որոնք նա ինքը չէ հաւաքել ժողովրդից անմիջապէս, այլ ստացած է ուրիշներից: Դոցա հրատարակելու համար պ. հաւաքողը բարեկամի առիթներին է սպասում, որ ինքը լաւ ծանօթանալ այդ բարբառների հետ— սրբագրութիւնը լաւ կատարելու համար: Ի վերջոյ աւելացնենք, որ ներկայ V գրքում զետեղւած է և մի բառարան Արարտեան բարբառով բոլոր ալն բառերի համար, որոնք հրատարակած հէքիաթներում գործ են ածւած և որ և է բացատրութեան կարօտ են: Դոցա թիւը մօտաւորապէս 3000-ի է հասնում:

Ա.